ՀՐԱԻԷՐ

ՆԵՐԿԱՅ Պրակովս, ինչպէս գիտեն արդէն ընթերցողք, կը փակուի Բազմավիպի կիսադարեան անընդհատ ընթացքն, և կը մտնէ նա 'ի նորն։ Արդեօք թերթս իւր այս յիսնամեայ շրջանին մէջ կատարե՞ց իւր պաշտօնն. կամ թէ լաւ եւս՝ եղա՞ւ օգտակար այն նպատակին որոյ համար հաստատեցաւ. և թէ արդեօք իրաւունք ունի՞ նոր կիսադարեան շրջան մ'ալ սկսելու. սոքա հարցեր են որ ամէնուն դիւրըմբռնելի փափուկ պատճառաց համար չենք կրնար մենք զայն լուծել, այլ կը թողունք ազգային բանիբուն, ուշիմ, այլ ոչ և միշտ արդարակշիռ և անաչառ լրագրութեան և քննադատութեան։ Յայտնի է թէ ամենայն ինչ փոփոխութեան ենթակայ է, և ամէն ինչ կը հիննայ. առաջինն եթէ իրաւամբ լրագրութեան համար ալ կրնանք գործել՝ բայց ոչ երկրորդն. զի թերթ մը իւր հնութեամբն կը նորանայ, և նորութեամբն կը հնանայ. այս վճիռ է խաղական նշանաւոր բանասիրի մը. ըստ այս վճռոյն Բազմավէպն ալ իւր հնութեամբն պէտք է նորանայ։ Բայց նոր ըսած ժամանակնիս չենք հասկնար նոր 'ի հիմանց, կամ թէ ընեմ փոփոխութեամբ ուղղութեան և կամ ծրագրի. ոչ, այլ նորութեամբ հին ծրագրի. որով թերթս եթէ օգտակար եղած է իւր հնախօսական, պատմական, բանասիրական, և նաև գիտական ուղղութեամբն՝ նոյնն պիտի շարունակէ ըլլալ, այլ ժամանակին գիտական յառաջադիմութեանց և հետազօտութեանց զուգաձայն. և ահա խնկոյն կը տեսնենք որ 'ի հնոյն պիտի փայլէ նորն, և նորն ալ հնոյն հետ պիտի խառնուի, և պիտի սաւզուի յիշեալ քննադատին վճիռն։ Ինչպէս հրատարակած էր խմբագրութիւնս՝ բաց 'ի ներքնոյն զարդաքինն ալ պիտի բարելաւէր. այս արտաքինն առ այժմ այսպիսի ներքին դժուար պարագայից պատճառաւ կը չափաւորենք, զարդարելով թերթիս մանաւորապէս ուսումնական մասը պատկերներով. որով ազգիս մէջ եւրոպական ուսումնական յառաջադիմութեան գաղափար մը տալէն զատ՝ կերպով մը պատկերազարդ թերթի մը պակասն և պահանջն ալ կը լեցնէ։

Զմոռնանք յիշատակել առ Բաժանորդս՝ որ խմբագրութիւնս 'ի յիշատակ իւր յոբելինին և 'ի դիւրութիւն իւր ընթերցողաց՝ շարադրեր է նաև Ցուցակ մը ազգային յօդուածոց յիսնամեայ Բազմավիպին։

Տարեկան գինը միշտ նոյնպէս անփոփոխ կը մնայ. այսինքն 10 ֆրանք կամ 4 ռուբլի։

Բաժանորդ գրուիլ ցանկացողք պէտք է դիմեն այսուհետև առ տեսչութիւն Տպագրատան և ոչ առ խմբագրութիւնս. տպագրատան հասցէն է.

Direction de l'Imprimerie Arménienne
S. Laz[illegible] Venise

digitised by A.R.A.R.@